



Հարկային բեռը ՀՀ բանկերում և վարկային կազմակերպություններում 2013 թ.-ի դրությամբ

ՀՀ վարկային կազմակերպությունների միություն



Երևան, 2014 թ.

Օգտագործված տնտեսական ցուցանիշների համառոտագիր

Սույն աշխատանքի նպատակն է վերլուծել ՀՀ բանկերի և վարկային կազմակերպությունների հարկային ծանրաբեռնվածությունը 2013 թ.-ի համար և հաշվարկել հարկային քաղաքականության ազդեցությունը վարկային տոկոսադրույքների վրա:

Ֆինանսական տեղեկատվությունը ձեռք է բերվել Պետական եկամուտների կոմիտեի, Ֆինանսների նախարարության, Կենտրոնական բանկի հրապարակումներից և պաշտոնական կայքերից, ինչպես նաև ՀՀ խոշոր հարկատուների տվյալները հրապարակող համապատասխան կայքից (www.harkatu.am):

Սույն վերլուծությունում ներառվել են ՀՀ-ում գործող 21 բանկերի և 14 խոշոր վարկային կազմակերպությունների ցուցանիշներ, որոնք ընգրկված են ՀՀ 1000 խոշոր հարկատուների ցանկում: Նշված 14 խոշոր վարկային կազմակերպությունների կողմից ընդհանուր կապիտալը կազմում է բոլոր 32 վարկային կազմակերպությունների կողմից ընդհանուր կապիտալի ավելի քան 80%-ը, իսկ ակտիվները՝ ավելի քան 75%-ը: Որոշ վարկային կազմակերպությունների կողմից վճարված հարկերի տեղեկատվության ձեռք բերման անհնարինության հետ կապված, սույն վերլուծության մեջ ընգրկված չեն 18 համեմատաբար փոքր վարկային կազմակերպությունների տվյալները, որոնք առկա չեն 1000 խոշոր հարկատուների ցանկում: Ընդ որում, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ 14 խոշոր վարկային կազմակերպությունների կողմից վճարված հարկերը կազմում են 21 բանկերի կողմից վճարված ընդհանուր հարկերի ընդամենը 10.2%-ը, ապա կարելի է պնդել, որ 18 համեմատաբար փոքր վարկային կազմակերպությունների կողմից վճարված հարկերի ծավալը շատ փոքր տեսակարար կշիռ ունի բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից վճարված ընդհանուր հարկերի ծավալում և չի կարող էականորեն ազդել սույն վերլուծության ճշտագրության վրա: Ըստ մեր գնահատականների՝ այս նյութի հաշվարկներում չներառված 18 վարկային կազմակերպությունների վճարված հարկերը կազմում են սույն վերլուծության մեջ ընգրկված 21 բանկերի և 14 խոշոր վարկային կազմակերպությունների կողմից վճարված ընդհանուր հարկերի ընդամենը 1 – 1.5%-ը:


Ընդհանուր տնտեսական պատկերը

ՀՆԱ-ի ցուցանիշը:

2013 թ.-ին ՀՀ անվանական ՀՆԱ-ն կազմել է 4,273 մլրդ դրամ, 2012թ-ի՝ 4,001 մլրդ դրամի դիմաց (Գծապատկեր 1): Այսպիսով, 2013թ-ին ՀՀ անվանական ՀՆԱ-ն ունեցել է 6.8% աճ, միևնույն ժամանակ ՀՆԱ-ի իրական աճը կազմել է 3.5%:

Պետական բյուջեի ցուցանիշները:

2013 թ.-ին ՀՀ պետական բյուջեի ընդհանուր եկամուտները կազմել են 1,071.4 մլրդ դրամ, 2012 թ.-ի 946.2 մլրդ դրամի դիմաց՝ ապահովելով 13.2% աճ (Գծապատկեր 1): 2013 թ.-ին ՀՀ պետական բյուջեի հարկային և պարտադիր սոցիալական վճարներից ստացված եկամուտները (այսուհետ հարկային եկամուտներ) կազմել են 972.2 մլրդ դրամ՝ 2012թ.-ի 852.9 մլրդ դրամի դիմաց (Գծապատկեր 1): Այսպիսով, 2013 թ.-ին հարկային եկամուտների աճը նախորդ տարվա նկատմամբ կազմել է մոտ 14%: *Այսպիսով, բյուջեի հարկային եկամուտների աճը ավելի քան երկու անգամ գերանդացել է անվանական ՀՆԱ-ի աճին, որը վկայում է 2013 թ.-ին հարկային քաղաքականության և վարչարարության խստացման մասին:*




Գծապատկեր 1. ՀՆԱ-ի և Պետական բյուջեի ցուցանիշները 2012-2013 թթ.

2013 թ.-ին հարկային մարմինների կողմից հավաքագրված կամ ներքին տնտեսության կողմից վճարված հարկերը կազմել են 630.5 մլրդ ՀՀ դրամ, իսկ ներմուծման հարկումը կամ որ նույնն է մաքսային մարմինների կողմից հավաքագրված հարկային և մաքսային եկամուտները կազմել են 341.7 մլրդ դրամ: Այսպիսով, բյուջեի հարկային եկամուտների մեջ ներքին տնտեսությունից հավաքված հարկային եկամուտները կազմել են ընդհանուր պետական բյուջեի հարկային եկամուտների 64.9%-ը, իսկ ներմուծման հարկումը՝ 35.1%-ը:


Բանկերի և վարկային կազմակերպությունների հիմնական տնտեսական ցուցանիշները

ՀՀ բանկերի և վարկային կազմակերպությունների համախառն ակտիվները 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել են 3,154 մլրդ ՀՀ դրամ, վարկային պորտֆելը՝ 1,935 մլրդ ՀՀ դրամ, կապիտալը՝ 534 մլրդ ՀՀ դրամ, որոնք աճել են համապատասխանաբար՝ 19.5%, 12.6% և 16.9% (Գծապատկեր 2): Այսպիսով, ակտիվների և ընդհանուր կապիտալի աճը գերազանցել է վարկային պորտֆելի աճին, որը վկայում է այն մասին, որ ներգրավված միջոցների մի մասը չի ուղղվել տնտեսության վարկավորմանը:



Գծապատկեր 2. ՀՀ բանկերի և վարկային կազմակերպությունների ֆինանսական դիրքը 2012-2013 թթ.

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ բանկերի և վարկային կազմակերպությունների ֆինանսական միջնորդության մակարդակը կարելի է բնութագրել ակտիվներ/ՀՆԱ և վարկային պորտֆել/ՀՆԱ հարաբերակցությամբ, որոնք կազմել են համապատասխանաբար՝ 73.8% և 45.3%՝ նախորդ տարվա նույն ցուցանիշների 61.8% և 42.9%-ի դիմաց (Գծապատկեր 3):




Գծապատկեր 3. Ֆինանսական միջնորդության մակարդակը

2013 թ.-ին ՀՀ բանկերի և վարկային կազմակերպությունների ընդհանուր վարկային պորտֆելը կազմել է 1,930.5 մլրդ դրամ, որից 93.1%-ը կամ 1,798 մլրդ դրամը պատկանել է բանկերին, իսկ 6.9%-ը կամ 132.3 մլրդ դրամը՝ վարկային կազմակերպություններին:

Նույն ժամանակահատվածում ՀՀ բանկերի և վարկային կազմակերպությունների ընդհանուր գուտ շահույթը կազմել է 43.8 մլրդ դրամ, որից 38.1 մլրդ դրամը՝ բանկերի, իսկ 5.7 մլրդ-ը՝ վարկային կազմակերպությունների մոտ: 2012 թ.-ի նկատմամբ բանկերի և վարկային կազմակերպությունների գուտ շահույթը միասին վերցված նվազել է 7.35%-ով: 2013 թ.-ին միայն բանկերի գուտ շահույթը նվազել է 8.98%-ով, իսկ վարկային կազմակերպությունների գուտ շահույթը աճել է 17.8%-ով:

Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից վճարված հարկերը

2013 թ.-ին ՀՀ բանկերի և 14 խոշոր վարկային կազմակերպությունների կողմից վճարված ընդհանուր հարկերի ծավալը կազմել է 42.9 մլրդ դրամ, որի 89.8%-ը կամ 39.5 մլրդ դրամը վճարվել է բանկերի, իսկ 4.4 մլրդ դրամը՝ վարկային կազմակերպությունների կողմից (Գծապատկեր 4): Քանի որ, ըստ օրենսդրության, բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից մատուցվող ֆինանսական միջնորդության ծառայությունները ազատված են ավելացված արժեքի հարկից, այդ իսկ պատճառով վճարված հարկերի 92.3%-ը կամ 39.6 մլրդ դրամը կազմել են ուղղակի հարկերը (եկամտահարկ և շահութահարկ):



Գծապատկեր 4. Ընդհանուր հարկերի բաշխումը 2013 թ.-ին


2013 թ.-ին ՀՀ վարկային կազմակերպությունների և բանկերի կողմից վճարված հարկերի կշիռը ՀՆԱ-ի մեջ կազմում է 1%, պետական բյուջեի ընդհանուր եկամուտների մեջ՝ 4%, իսկ միայն հարկային եկամուտների մեջ՝ 4.5%: Քանի որ բանկերը և վարկային կազմակերպությունները առևտրային նպատակներով ապրանքների և ծառայությունների ներմուծմամբ չեն զբաղվում, ուստի նրանց կողմից մաքսային մարմիններ կատարված հարկային պարտավորությունները կազմել են ընդամենը 0.55 մլրդ դրամ: Բանկերի և վարկային կազմակերպությունների հարկերի առյուծի բաժինը հավաքագրվել է հարկային մարմինների կողմից ներքին տնտեսական գործունեության արդյունքում: Այսպիսով, հարկային մարմինների կողմից հավաքագրված եկամուտների կամ որ նույնն է ներքին տնտեսությունից ստացված հարկային եկամուտների մեջ (630.5 մլրդ դրամ) բանկերի և

վարկային կազմակերպությունների կողմից վճարված ներքին հարկերի (42.4 մլրդ դրամ) տեսակարար կշիռը կազմել է 6.7%:

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից վճարված ուղղակի հարկերը (եկամտահարկ և շահութահարկ) կազմել են 39.6 մլրդ դրամ, իսկ պետական բյուջե մուտքագրված ընդհանուր ուղղակի հարկերը կազմել են 399.1 մլրդ ՀՀ դրամ: Այսպիսով, ՀՀ բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից վճարված ուղղակի հարկերը կազմել են պետական բյուջե վճարված համախառն ուղղակի հարկերի 9.9%:

Եկամտային հարկ:

2013 թ.-ին ՀՀ բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից վճարված եկամտային հարկի մեծությունը կազմել է 20.3 մլրդ դրամ (Գծապատկեր 5): Նույն ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջե մուտքագրված եկամտային հարկի մեծությունը կազմել է 251.1 մլրդ դրամ: Այսպիսով, բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից վճարված եկամտային հարկի տեսակարար կշիռը ՀՀ պետական բյուջեի ընդհանուր եկամտային հարկից ստացված եկամուտների մեջ կազմել է 8.1%: Հատկանշական է, որ ՀՀ բանկերում և վարկային կազմակերպություններում ներգրավված աշխատողների ընդհանուր թվաքանակը, այսինքն՝ եկամտային հարկ վճարողները, ըստ տարբեր գնահատականների, կազմում են ՀՀ տնտեսությունում վարձու աշխատողների 2-2.5%-ը: Սույն ցուցանիշը վկայում է այն մասին, որ ֆինանսաբանկային հատվածում ներգրավված աշխատուժը մոտ 3 անգամ ավելի եկամտային հարկ է վճարում, քան տնտեսության այլ հատվածներում ներգրավված միջին վարձու աշխատողը:




Գծապատկեր 5. Ընդհանուր եկամտահարկի բաշխումը 2013 թ.-ին

2013 թ.-ին բանկերի կողմից վճարված եկամտային հարկը կազմել է 18.4 մլրդ դրամ, իսկ վարկային կազմակերպություններին՝ 1.85 մլրդ դրամ (Գծապատկեր 5): *Եթե ՀՀ բանկերը ակտիվների և վարկային պորտֆելի մեծության ցուցանիշով գերազանցում են վարկային կազմակերպությունների համապատասխան ցուցանիշները ավելի քան 15 անգամ, ապա վճարված եկամտային հարկի ցուցանիշով բանկերը վարկային կազմակերպություններին գերազանցում են մոտ 10 անգամ: Այս համեմատությունը վկայում է այն մասին, որ միավոր ակտիվի կամ վարկային պորտֆելի հաշվարկով, վարկային կազմակերպությունները մոտ 40% ավել եկամտային հարկ են վճարում, քան բանկերը:* Այս տարբերությունը իր հերթին վկայում է այն մասին, որ վարկային կազմակերպությունները միավոր վարկի դիմաց ներգրավում են ավելի մեծ քանակի աշխատուժ, քանի որ վարկային կազմակերպությունների կողմից տրամադրվող միջին վարկի մեծությունը մի քանի անգամ զիջում է բանկերի կողմից տրամադրվող միջին վարկի մեծությանը:

Շահութահարկ:

2013 թ.-ին ՀՀ պետական բյուջեի շահութահարկի գծով ընդհանուր եկամուտները կազմել են 124.5 մլրդ դրամ (Գծապատկեր 6): Նույն ժամանակահատվածում ՀՀ բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից շահութահարկի գծով պետական բյուջե մուտքագրվել է 19.3 մլրդ դրամ, որը կազմել է ՀՀ պետական բյուջե մուտքագրված ընդհանուր շահութահարկի 15.5%-ը: *Միայն բանկերի կողմից վճարված շահութահարկը կազմել է 17.37*

մլրդ դրամ, իսկ վարկային կազմակերպություններինը՝ 1.94 մլրդ դրամ¹ (Գծապատկեր 6): Համեմատելով բանկերի և վարկային կազմակերպությունների համախառն ակտիվները և/կամ վարկային պորտֆելը և վճարված շահութահարկը՝ ստացվում է, որ վարկային կազմակերպությունների կողմից միավոր վարկային պորտֆելի դիմաց վճարված շահութահարկը մոտ 52%-ով գերազանցում է բանկերի կողմից վճարված շահութահարկին:



Գծապատկեր 6. Ընդհանուր շահութահարկի բաշխումը 2013 թ.-ին

Այսպիսով, վերևում կատարված համեմատական վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ

1. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ բանկերը և վարկային կազմակերպությունները միասին վերցրած վճարում են ՀՀ պետական բյուջեի եկամտային հարկից և շահութահարկից ստացվող եկամուտների համապատասխանաբար 8.1% և 15.5%-ը, ինչպես նաև այն հանգամանքը, որ այս ոլորտում զբաղվածների թիվը կազմում է մոտ 10-12 հազար մարդ, ապա կարելի է պնդել, որ բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից վճարված հարկերի տեսակարար կշիռը բյուջեի եկամուտների ձևավորման մեջ էականորեն ավելի մեծ է, քան տնտեսության մյուս ճյուղերինը:

¹ Այստեղ հարկ է նշել, որ ՀՀ բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից 2013թ.-ին կատարված շահութահարկի գծով մուծումները ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ ԿԲ կողմից հրապարակված հաշվետվություններում էականորեն տարբերվում են: Տարբերությունը կարող է պայմանավորված լինել այն հանգամանքով, որ ՀՀ ԿԲ-ն հրապարակում է 2013թ.-ի տնտեսական գործունեության արդյունքում մուծված շահութահարկի մեծությունը, իսկ ՀՀ ֆինանսների նախարարությունը՝ շահութահարկի գծով պարտավորությունների ընդհանուր մեծությունը, որ կարող է ընդգրկել նաև նախորդ տարիների վերահաշվարկներ:

2. Մեկ միավոր վարկային պորտֆելի դիմաց վարկային կազմակերպությունները ավելի քան 48% ավել հարկ են վճարում, քան ՀՀ բանկերը: Այսպես, եթե բանկերը 1 մլրդ վարկային պորտֆելի դիմաց վճարում են 21.4 մլն դրամ հարկ, ապա վարկային կազմակերպությունները 1 մլրդ դրամ վարկային պորտֆելի դիմաց վճարում են 31.8 մլն դրամ հարկ:
3. *Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված միավոր վարկի տոկոսադրույքի մեջ 2.22 տոկոսային կետը կազմում են վճարվող հարկերը: Պետական բյուջե կատարված հարկերի և տուրքերի մասնաբաժինը բանկերի միավոր վարկի տոկոսադրույքի կառուցվածքում կազմում է 2.15 տոկոսային կետ, իսկ վարկային կազմակերպությունների մոտ՝ 3.18 տոկոսային կետ:*

Միավոր վարկային պորտֆելի դիմաց վարկային կազմակերպությունների ավելի շատ հարկերի վճարումը պայմանավորված է մի քանի գործոններով: Նախ, բանկերի հետ համեմատ վարկային կազմակերպությունների միջին վարկի մեծությունը մի քանի անգամ փոքր է, ուստի վարկային կազմակերպությունները միավոր վարկային պորտֆելի տրամադրման և սպասարկման համար ավելի շատ աշխատուժ են ներգրավում, և, հետևաբար, ավելի շատ եկամտային հարկ են վճարում պետական բյուջե: Երկրորդ, վարկային կազմակերպությունների շահութաբերությունը ըստ վարկային պորտֆելի ավելի բարձր է քան բանկերինը: Այսպես, վարկային կազմակերպությունների մոտ զուտ շահույթի տեսակարար կշիռը վարկային պորտֆելում կազմում է 4.15%, իսկ բանկերի մոտ՝ 2.12%: Հետևաբար, միավոր վարկի դիմաց վարկային կազմակերպությունները ավելի շատ շահութահարկ են մուծում, քան բանկերը:

Սակայն ըստ վարկային պորտֆելի շահութաբերության բարձր մակարդակը իրենից չի ենթադրում շահութաբերության ավելի բարձր մակարդակ՝ հաշվարկված ըստ սեփական կապիտալի (ROE): Այսպես, 2013 թ.-ին շահութաբերությունը ըստ սեփական կապիտալի (Զուտ շահույթ/Սեփական կապիտալ հարաբերակցություն) բանկերի մոտ կազմել է 8.36%, իսկ վարկային կազմակերպությունների մոտ՝ 7.33%: Ըստ սեփական կապիտալի շահութաբերությունը բանկերի մոտ ավելի քան 1%-ով գերազանցում է վարկային

կազմակերպությունների նույն ցուցանիշը, որը պայմանավորված է բանկերի պարտքայնության կամ որ նույնն է ֆինանսական լծակի ավելի արդյունավետ օգտագործմամբ: Այսպես, բանկերի ֆինանսական լծակի գործակիցը (leverage ratio), որը ցույց է տալիս միավոր կապիտալի դիմաց ներգրավված փոխառու միջոցների հարաբերակցությունը, կազմում է 5.46, իսկ վարկային կազմակերպությունների մոտ՝ 1.76: Այսինքն, բանկերը, ի տարբերություն վարկային կազմակերպությունների, ունեն 3 անգամ ավելի մեծ պարտքայնության մակարդակ, որն ուղղվում է վարկավորմանը: Վարկային կազմակերպությունների մոտ վարկային պորտֆելի գերակշիռ մասը կազմում է սեփական կապիտալը, իսկ բանկերի մոտ՝ փոխառու կապիտալը: Հետևաբար, չնայած վարկային կազմակերպությունների հետ համեմատ ավելի ցածր տոկոսային մարժայի և ավելի ցածր միջին վարկային տոկոսադրույքի, այնուամենայնիվ, բանկերի տնտեսական գործունեությունը ավելի շահութաբեր է: